ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Գյումրիի զինվորական կոմիսար Գագիկ Խաչատրյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի փետրվարի 15-ին N 1896 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Գյումրիի զինվորական կոմիսարիատի(այսուհետ՝ Կոմիսարիատ) համար հեռուստացույց ձեռք բերելու և Կոմիսարիատին նվիրելու նպատակով հատկացնել 160.000 (մեկ հարյուր վաթսուն հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին

1) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017թվականի բյուջեի 2/5/1 գործառական դասակարգման (5122) «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

2) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի սահմաններում ձեռք բերել թվով 1 (մեկ) հեռուստացույց և այն որպես նվիրատվություն օրենքով սահմանված կարգով հանձնել Կոմիսարիատին:

Ռ. ՍԱՆՈՅԱՆ

Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

Լ.ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝
Ա.Տաշչյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Գյումրիի զինվորական կոմիսարիատի կարիքների համար հեռուստացույց ձեռք բերելու և Կոմիսարիատին նվիրելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու անհրաժեշտությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<< Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Գյումրիի զինվորական կոմիսարիատի կարիքների համար հեռուստացույց ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017թվականի բյուջեում էական փոփոխություններ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: